

## ԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ

### ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՈՒ

Հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի հռչակագիրը՝ Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը կնքեցին Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, որով հիմնադրվեց Եվրասիական տնտեսական միությունը: Միության շրջանակներում պետք է ապահովվի ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շարժի ազատություն:

2015 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1167.7 մլրդ դրամ և 93.5%-ով ապահովել ճշտված ծրագրի կատարումը, 2%-ով կամ 23 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ծրագիրը կատարվել է 93.6%-ով, 2015 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 39.7%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 423.9 մլրդ դրամ<sup>1</sup>:

2016 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 512.6 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր՝ 96.3%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը: 2016 թվականի առաջին կիսամյակում հարկային եկամուտների և պետական տուրքերի 34.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Դա կազմել է 177.4 մլրդ դրամ և 7.9%-ով կամ 15.2 մլրդ դրամով գիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը:

**Հիմնաբառեր.** Եվրասիական տնտեսական միություն, ֆինանսական հսկողություն, ավելացված արժեքի հարկ, ներմուծում և արտահանում, դրամի փոխարժեք

JEL: H20, H21, H22, H23, H26, F53, F55

<sup>1</sup> Տե՛ս [http://www.parliament.am/committee\\_docs\\_5/FV/BKH\\_2015text.pdf](http://www.parliament.am/committee_docs_5/FV/BKH_2015text.pdf)

Հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի հռչակագիրը՝ Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Ղազնությունը կնքեցին Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, որով հիմնադրվեց Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ): Միության շրջանակներում պետք է ապահովվեն ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շարժի ազատություն, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացում տնտեսության այն ճյուղերում, որոնք սահմանված են նշված պայմանագրով և միջազգային պայմանագրերով: Միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն<sup>2</sup>:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը ներառում է բազմաթիվ հոդվածներ, տնտեսական բոլոր ոլորտների կարգավորման բազմապիսի դրույթներ, սակայն մեր ուշադրության կենտրոնում կլինի ֆինանսական մասը՝ հարկերի գանձման և վճարման մեխանիզմները, ձևավորվող բյուջեն: ԵԱՏՄ մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է միության բյուջեի միջոցների հաշվին, որը ձևավորվում է «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» կանոնակարգով: Ֆինանսական տարվա համար բյուջեն ձևավորվում է ռուսական ռուբլով՝ անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների հաշվին: Միության բյուջեում անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների չափը (սանդղակը) սահմանվում է բարձրագույն խորհրդի կողմից: ԵԱՏՄ բյուջեն պետք է հավասարակշռված լինի եկամուտների ու ծախսերի մասով: Ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում դեկտեմբերի 31-ին: Միության բյուջեն և «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» կանոնակարգը ևս հաստատվում են բարձրագույն խորհրդի կողմից: Վերջինս է իրականացնում նաև փոփոխությունները բյուջեում և «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» կանոնակարգում<sup>3</sup>:

Միության բյուջեի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով երկու տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ անցկացվում է ֆինանսատնտեսական գործունեության վերստուգում: Անդամ պետություններից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող են ստուգումներ անցկացվել ֆինանսատնտեսական գործունեության հետ կապված առանձին հարցերի մասով: Ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումներն իրականացվում են անդամ պետությունների պետական ֆինանսական հսկողության մարմինների ներկայացուցիչներից բաղկացած խմբի կողմից, և արդյունքները, սահմանված կարգով, ներկայացվում են խորհրդի քննարկմանը<sup>4</sup>:

Միության բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման և տնօրինման արդյունավետության, գույքի և այլ ակտիվների օգտագործման արդյունավետության որոշման նպատակով անցկացվում է արտաքին աուդիտ (վերահսկողություն): Արտաքին աուդիտի չափորոշիչներն ու մեթոդաբանությունը

<sup>2</sup> Տե՛ս [http://www.mineconomy.am/uploads/EAEU\\_Paymanagir\\_hayeren.pdf](http://www.mineconomy.am/uploads/EAEU_Paymanagir_hayeren.pdf), Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, հոդված 20:


<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, հոդված 21:

սահմանվում են անդամ պետությունների պետական ֆինանսական հսկողության մարմինների կողմից: Արտաքին աուդիտի արդյունքները, սահմանված կարգով, ներկայացվում են բարձրագույն խորհրդի քննարկմանը<sup>5</sup>:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 23-րդ և 24-րդ հոդվածները հստակ նշում են, թե ինչպես պետք է իրականացվի տեղեկատվական փոխգործակցությունը և ներկայացվի պաշտոնական վիճակագրական տեղեկատվությունը: Պայմանագրի 71-րդ և 72-րդ հոդվածներով սահմանվում են հարկման ոլորտում անդամ պետությունների փոխգործակցության, անուղղակի հարկերի գանձման սկզբունքները, որոնց հիման վրա կազմվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 18-րդ արձանագրությունը: Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը միանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, ինչպես նաև Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու ԵԱՏՄ իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին՝ դառնալով Եվրասիական տնտեսական միության անդամ:

Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվում են հետևյալ չափերով՝

- Բելառուսի Հանրապետություն՝ 4,70%,
- Ղազախստանի Հանրապետություն՝ 7,33%,
- Ռուսաստանի Դաշնություն՝ 87,97%:



**Գծապատկեր 1. ԵԱՏՄ անդամ պետությունների ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները**

Իհարկե, հաշվի առնելով ԵԱՏՄ պայմանագիրը և դրա շրջանակներում փոխհարաբերություններն անդամ երկրների միջև, կատարվել են նաև մի շարք հարկային օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես՝ «Ավելացված արժեքի մասին» օրենքում՝ ապրանքների արտահանման, ներմուծման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) անձանց կողմից ԵԱՏՄ տարածքում այլ՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) անձանց (կամ հակառակը) ծառայու-

<sup>5</sup> Տես նույն տեղը, հոդված 22:

թյունների մատուցման դեպքերում ԱԱՀ հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով, 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» թիվ 18 հավելվածով ներկայացված արձանագրությամբ, եթե «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով առանձնահատկություններ նախատեսված չեն<sup>6</sup>: Անդրադառնալով ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը և դրա հետևանքներին:

Տրվել են արդյոք ՀՀ-ին լայն հնարավորություններ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո, ՀՀ արտահանողները կարողանում են օգտվել 170 մլն-ոց շուկայից՝ չունենալով ընդհանուր սահման որևէ անդամ երկրի հետ, օրենքի ի՞նչ փոփոխություններ կամ իրավական փաստաթղթեր են անհրաժեշտ փոխադարձ հարաբերությունները կարգավորելու համար: Հարկերի հետաձգման կամ հաշվանցման ինչպիսի՞ քայլեր ձեռնարկվեցին:

Ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հրապարակած տվյալների՝ 2016 թ. հունվար-սեպտեմբերին երրորդ երկրների հետ ԵԱՏՄ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 362 մլրդ դոլար, այդ թվում. արտահանումը՝ 218.5 մլրդ դոլար, ներմուծումը՝ 143.2 մլրդ դոլար: Սա նշանակում է, որ առևտրաշրջանառության ներկա մակարդակը 17.2%-ով կամ ավելի քան 75 մլրդ դոլարով պակաս է 2015 թ. համադրելի ժամանակահատվածում գրանցված ցուցանիշից: Հատկապես անհանգստացնող է արտահանման կրճատումը, քանզի, 2015 թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ, 2016 թ. ԵԱՏՄ համախառն արտահանումը կրճատվել է 23.5%-ով կամ մոտ 67.1 մլրդ դոլարով:


Ջուզահեռաբար կրճատվել է երրորդ երկրներից դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ կատարվող ներմուծման ծավալը: Մասնավորապես՝ 2015 թ. համադրելի ժամանակահատվածի համեմատությամբ, 2016 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համախառն ներմուծումը կրճատվել է 5.3%-ով կամ 8.1 մլրդ դոլարով: Պետք է սակայն նշել, որ ներմուծման այսպիսի կրճատումն օտարերկրյա ներմուծվող ապրանքները ազգային ապրանքատեսակներով փոխարինելու արդյունք չէ, այլ բխում է սպառողների կենսամակարդակի նվազումից և, դրանով պայմանավորված, սպառման կրճատումից: Համանման անկում է ապրել նաև ԵԱՏՄ անդամ երկրների միջև փոխադարձ առևտուրը: 2016 թ. ԵԱՏՄ ներքին առևտրաշրջանառությունը կազմել է 29.5 մլրդ դոլար, ինչն ավելի քան 14%-ով պակաս է 2015 թ. համադրելի ժամանակահատվածի ցուցանիշից: Հետաքրքրական է, որ միայն Հայաստանն է կարողացել ապահովել արտահանման աճ դեպի բոլոր անդամ երկրներ՝ ընդհանուր առմամբ ավելացնելով արտահանման ծավալները 55 տոկոսային կետով: Արտահանման աճ է գրանցվել նաև Բելառուսից դեպի Ղրղզստան (4%) և Ղրղզստանից դեպի Ռուսաստան (18%), իսկ մնացած բոլոր առևտրային ուղղություններում արձանագրվել է շոշափելի անկում: Այսպես՝ Բելա-

<sup>6</sup> Տե՛ս [http://www.mineconomy.am/uploads/5\\_arm.pdf](http://www.mineconomy.am/uploads/5_arm.pdf)

ռուսից դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ կատարվող արտահանումը կրճատվել է 2.7%-ով, Ղազախստանից՝ 31.6%-ով, Ղրղզստանից՝ 46.6%-ով, Ռուսաստանից՝ 15.6%-ով: Համանման պատկեր է նաև ներմուծման ոլորտում. ԵԱՏՄ անդամ երկրներից դեպի Բելառուս կատարվող ներմուծումը կրճատվել է 13%-ով, դեպի Ղրղզստան՝ 29.1%-ով, դեպի Ղազախստան՝ 24%-ով, դեպի Ռուսաստան՝ 9.3%-ով: Այստեղ ևս Հայաստանը միակ երկիրն է, որտեղ ԵԱՏՄ-ից կատարվող ներմուծման ծավալները ոչ միայն չեն նվազել, այլև գրանցվել է 2.95% աճ:

Ըստ ՀՀ 2015 թ. պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության<sup>7</sup> առաջին կիսամյակում ձևավորվել է տնտեսության արտաքին հատվածը բնութագրող ցուցանիշների վատթարացում: Արտահանման նվազմանը զուգընթաց, տարեսկզբի համեմատությամբ նվազել են նաև Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները, ինչը, սակայն, ներմուծման առաջանցիկ նվազման պայմաններում չի նպաստել ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացմանը:

2015 թվականի առաջին վեց ամիսներին կրճատվել են և՛ արտաքին առևտրաշրջանառությունը, և՛ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը<sup>8</sup>: Նույն ժամանակահատվածում արտաքին առևտրի բացասական մնացորդը (գծապատկեր 2) կազմել է 797.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ բարելավվելով 40.7%-ով (պայմանավորված արտահանման նվազման համեմատությամբ ներմուծման առաջանցիկ կրճատմամբ)<sup>9</sup>:



**Գծապատկեր 2. Առևտրային հաշվեկշռի շարժընթացը հունվար-հունիս ամիսներին (մլն ԱՄՆ դոլար)**

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2015 թվականի առաջին վեց ամիսների արդյունքներով կազմել է 2186.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով շուրջ 20.6%-ով: Հաշվետու ժամանակահատ-

<sup>7</sup> Տե՛ս [www.mfe.am/index.php?fl=6920&lang=1](http://www.mfe.am/index.php?fl=6920&lang=1)  
<sup>8</sup> Արտահանումը՝ ՖՕԲ, ներմուծումը՝ ՍԻՖ գներով:  
<sup>9</sup> Արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկվել են ՖՕԲ գներով) 2015 թվականի առաջին կիսամյակում կազմել է 567.6 մլն ԱՄՆ դոլար:

վածում տեղի է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների նվազում. արտահանումը նվազել է 1.3%-ով՝ կազմելով 694.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 27.2%-ով՝ կազմելով 1491.7 մլն ԱՄՆ դոլար:

Նույն ժամանակահատվածում տեղի է ունեցել ներմուծման զգալի կրճատում՝ պայմանավորված տնօրինվող եկամուտների նվազմամբ և ներմուծման գների աճով, ընդ որում, ներմուծման անկում գրանցվել է ըստ բոլոր ապրանքախմբերի: Ընթացիկ տարվա հունվար-հունիսին ներմուծումը կրճատվել է 27.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված էր ոչ ԵԱՏՄ երկրներից ներմուծվող ապրանքների մաքսային դրույքաչափերի բարձրացման հետևանքով ապրանքների գների աճով, ինչպես նաև բնակչության իրական տնօրինվող եկամուտների նվազման հանգամանքով:

2015 թվականի առաջին վեց ամիսների արդյունքներով արտահանումը նվազել է 1.3%-ով՝ հիմնականում պայմանավորված արտաքին պահանջարկի նվազմամբ: Արտահանման անկման առումով իրենց դերն են ունեցել «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը: Մյուս կողմից՝ արտահանման անկմանը հակազդել են հիմնականում «Հանքահումքային արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերը: Հայրենական ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի նվազումը մասամբ պայմանավորված է գործընկեր երկրների ազգային արժույթների՝ դոլարի նկատմամբ արժեզրկմամբ, ինչը հանգեցրել է ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժևորմանը և, դրա հետևանքով, արտահանվող ապրանքների մրցունակության անկմանը:

2015 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտների 93.1%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են շուրջ 501.5 մլրդ դրամ՝ 95.5%-ով ապահովելով Կառավարության լիազորությունների շրջանակներում ճշգրտված ծրագիրը: Նույն ժամանակահատվածում հարկային եկամուտների և պետական տուրքերի 38.4%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Դա կազմել է 192.6 մլրդ դրամ և 6.6%-ով կամ 13.5 մլրդ դրամով պակաս է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից: ԱԱՀ մուտքերից 94.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 98.3 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Ներքին շրջանառությունից ստացված մուտքերը, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ, աճել են 17.1%-ով կամ 14.3 մլրդ դրամով: Մաքսային սահմանին զանձված մուտքերը, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ, նվազել են 22.8%-ով կամ 27.9 մլրդ դրամով:

2015 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 6.1%-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով շուրջ 30.4 մլրդ դրամ, որից 8.2 մլրդ դրամը 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի գործողության արդյունքում ՀՀ ստացած զուտ մուտքն է: 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատությամբ մաքսատուրքի մուտքերն աճել են 22.3%-ով կամ 5.5 մլրդ դրամով: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ պայմանավորված՝ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Մաքսային կարգավորման մասին»

ՀՕ-241-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ից) ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգիրքը: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են այն հարաբերությունները, որոնք, Մաքսային միության մաքսային օրենսգրքի և 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համաձայն, կարող են կարգավորվել ազգային օրենսդրությամբ: «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի համաձայն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ից)՝ ԵԱՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման համար մաքսատուրքեր չեն գանձվում, իսկ միության անդամ չհանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման համար գանձվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 16-ի թիվ 54 որոշմամբ հաստատված՝ միասնական մաքսային սակագներով հաշվարկված մաքսատուրքեր՝ բացառությամբ պայմանագրի 4-րդ հավելվածով նախատեսված ապրանքների, որոնց համար մաքսատուրքը վերոնշյալ պայմանագրով նախատեսված անցումային ժամանակահատվածում գանձվում է նույն պայմանագրի հավելվածով սահմանված դրույքաչափերով: Բացի այդ, վերոնշյալ պայմանագրի 2-րդ հավելվածի 1-ին կետով փոփոխություն է կատարվել 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության մեջ: Նախկինում սահմանվում էր, որ ներմուծման մաքսատուրքի գումարների բաշխման նորմատիվը ՀՀ-ի համար կազմում է 1.13%, սակայն 5-րդ հավելվածի 12-րդ կետը խմբագրված է, և առկա են վերը նշված ցուցանիշները (գծապատկեր 1): Անդամակցությունից հետո Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» համաձայնագիրը, որով սահմանված են ֆիզիկական անձանց կողմից միության սահմանով անձնական օգտագործման ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսատուրքի և հարկերի միասնական դրույքաչափեր: Միաժամանակ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածով սահմանվել է, որ միության անդամ չհանդիսացող պետությունից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար վճարվում են միասնական մաքսային վճարներ: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 4.2%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 21 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթակազմակերպիչ ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 13.1 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթակազմակերպիչ ապրանքների հարկումից՝ 8 մլրդ դրամ:

Իսկ ի՞նչ գործիքների կիրառման դեպքում կարելի է խթանել արտահանումը: Դրանի արժեզրկումը տեսականորեն կարող է, բայց գործնականում

կհանգեցնի բնակչության աղքատացմանը. արդյո՞ք այդ պարագայում որևէ ազդեցություն կունենա արտահանման վրա: Գուցե կարելի է գործադրել միասնական արժույթի կամ ընդհանուր հաշվարկային միավորի ներդրման տնտեսական գործիքը. օրինակ՝ ընտրել գերակշիռ դիրք ունեցող ԵԱՏՄ անդամ երկրի արժույթը: Սակայն դա կազմավորման փուլում գտնվողների համար կիրառելի չէ, իսկ ձևավորված կայուն տնտեսության պարագայում տրամաբանական է: Առայժմ երկրների միջև ապրանքների արժեքները վերածվում են դոլարի: Ըստ 2015 թ. պաշտոնական վիճակագրության՝ նշված ժամանակահատվածում ԵՄ երկրներ է արտահանվել 144,5 մլն դոլարի ապրանք՝ 2014 թ. 155 մլն դոլարի դիմաց: Օրինակ՝ Բելգիա, Բուլղարիա, Նիդերլանդներ արտահանումը նվազել է 15–25%-ով: Մի քանի երկրներ ավելացել են, օրինակ՝ Իտալիա, Ավստրիա, սակայն ընդհանուր ցուցանիշի աճ չի արձանագրվել: Սա ուշագրավ է նրանով, որ անցած տարվա վերջին դրամի փոխարժեքը զգալիորեն արժեզրկվեց եվրոյի նկատմամբ, սակայն դա չհանգեցրեց ապրանքների արտահանման աճի, մասնավորապես՝ դեպի Եվրոպա:

ԱԱՀ դրույքաչափը տարբեր երկրներում տարբեր չափով է սահմանված: Օրինակ՝ ԵԱՏՄ անդամ երկրների համար ԱԱՀ համանմուշի (ստանդարտ) չափերը հետևյալն են՝ Ռուսաստան 18%, Ղազախստան 12%, Բելառուս 20%, Հայաստան՝ 20%.<sup>10</sup> ԱԱՀ դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20% դրույքաչափը) ԱԱՀ գումարը որոշվում է 16,67% հաշվարկային դրույքաչափով: Եթե անձը օրենքի խախտմամբ իրեն չի համարել ԱԱՀ վճարող, կամ ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ով հարկվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում ԱԱՀ գումարի առանձնացում չի կատարել, կամ հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել և, միաժամանակ, նշված դեպքերում ԱԱՀ գումարը չի արտացոլել ԱԱՀ հաշվարկի համապատասխան տողերում, ապա ԱԱՀ գումարը հաշվարկվում է ԱԱՀ 20% դրույքաչափի կիրառմամբ<sup>11</sup>:

Վերը շարադրվածի արդյունքում տեսանելի է, թե որքան աշխատատար և ժամանակատար են նոր օրենքի առաջադրած պայմանները ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցության պարագայում, ուստի դա, ըստ իս, լրանշակման և վերանայման կարիք ունի, քանի որ ցանկացած տնտեսական գործունեություն առաջնորդվում է նաև այլ օրենքներով և իրավական ակտերով՝ առավել առաջնային համարելով.

- ա) իրավական դաշտում անդամ երկրների փոխհամագործակցությունը,
- բ) գնումների մասին օրենքի ընդհանրացման և կարգավորման հարցերը,
- գ) հարկային և մաքսային օրենքների տարաբնույթ մեկնաբանությունները:

Ուսումնասիրելով և քննարկելով նոր ընդունված մի շարք օրենսդրական փոփոխություններ՝ առաջարկում ենք.

1. Ձևավորված կայուն տնտեսության մեջ օգտագործել միասնական արժույթ, քանի որ առավել դյուրին և արագ կկազմակերպվի տնտեսական

<sup>10</sup> Տե՛ս [http://www.ey.com/Publication/vwLUAssets/WorldwideVAT-GST-and-sales-tax-guide-2015/\\$FILE/Worldwide%20VAT,%20GST%20and%20Sales%20Tax%20Guide%202015.pdf](http://www.ey.com/Publication/vwLUAssets/WorldwideVAT-GST-and-sales-tax-guide-2015/$FILE/Worldwide%20VAT,%20GST%20and%20Sales%20Tax%20Guide%202015.pdf)

<sup>11</sup> Տե՛ս <http://www.arlis.am/>, << օրենքը ավելացված արժեքի հարկի մասին, հոդված 9:



փոխհամագործակցությունը, ԵՏՄ անդամ երկրներում արտարժույթի տարբեր կուրսերի տատանումների արդյունքից տնտեսական աճ կամ «վնաս» չի առաջանա:

2. Վերանայել անդամ երկրների հարկի դրույքաչափը՝ ընդունելով համանմուշ՝ 18%, քանի որ, վերը նշված վիճակագրական ուսումնասիրությունից ելնելով, ԵԱՏՄ անդամ երկրներն ունեն ավելացված արժեքի հարկի գործող տարբեր դրույքաչափեր, միջին արժեքը կկազմի 18%, որը կստեղծի իրավահավասար պայմաններ նույն դաշտում աշխատողների՝ անդամ պետությունների համար:

Այս պայմաններում ՀՀ շատ կազմակերպությունների համար, որոնք համարվում են ՓՄՁ (փոքր և միջին ձեռնարկություն), հատկապես շրջանառության հարկ վճարող համարվող անձինք, որոնց գործունեության բոլոր տեսակների մասով իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի, չի գերազանցում 115,0 մլն դրամը, ընկնում են ծանր հարկային բեռի տակ՝ 20% հարկի դրույքաչափը պահպանելով. նկատի ունենանք նաև արտոնությունների վերացման հանգամանքը հետագա տարիների գործունեության պարագայում:

3. Վերանայել մենաշնորհային բարձր և մենաշնորհային ցածր գների սահմանման մեթոդաբանության (հաստատվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 117 որոշմամբ) կիրառումը ՀՀ-ի համար. դա որքանով կարող է նպաստել Եվրոպական կամ այլ երկրներից ապրանքների ներմուծմանը:

4. Վերանայել «Մրցակցության միասնական սկզբունքների և կանոնների մասին» համաձայնագրով նախատեսված տուգանքների հաշվարկման մեթոդաբանությունը և նշանակման կարգը (հաստատվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 118 որոշմամբ): Դրա կիրառման դեպքում ՀՀ տնտեսավարողի շահը որքանով պաշտպանված կլինի: Այս հարցի քննարկումն ավելի ընդգրկուն հարցեր է առաջացնում և լուծումներ պահանջում. մի բան, որ հրատապ է և կարևոր՝ հատկապես Հայաստանի Հանրապետության համար:

### Օգտագործված գրականություն

1. [http://www.parliament.am/committee\\_docs\\_5/FV/BKH\\_2015text.pdf](http://www.parliament.am/committee_docs_5/FV/BKH_2015text.pdf)
2. [http://www.mineconomy.am/uploads/EAEU\\_Paymanagir\\_hayeren.pdf](http://www.mineconomy.am/uploads/EAEU_Paymanagir_hayeren.pdf), Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր:
3. <http://www.arlis.am/>, ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին:
4. [http://www.mineconomy.am/uploads/5\\_arm.pdf](http://www.mineconomy.am/uploads/5_arm.pdf)
5. [www.mfe.am/index.php?fl=6920&lang=1](http://www.mfe.am/index.php?fl=6920&lang=1)
6. [http://www.ey.com/Publication/vwLUAssets/WorldwideVAT-GST-and-sales-tax-guide-2015/\\$FILE/Worldwide%20VAT,%20GST%20and%20Sales%20Tax%20Guide%202015.pdf](http://www.ey.com/Publication/vwLUAssets/WorldwideVAT-GST-and-sales-tax-guide-2015/$FILE/Worldwide%20VAT,%20GST%20and%20Sales%20Tax%20Guide%202015.pdf)

**АНУШ МАРКАРЯН***Соискатель кафедры Финансового учета АГЭУ*

*Сравнительная оценка налоговых и таможенных законов между странами-членами Евразийского Экономического Союза.* – Основываясь на декларации об “Интеграции Евразийского Экономического Союза” от 18 ноября 2011 года, Республика Беларусь, Республика Казахстан и Российская Федерация заключили договор о ЕЭС, которым стороны учреждают Евразийский Экономический Союз (впредь Союз), в рамках которого обеспечивают свободу движения товаров, услуг, капитала и рабочей силы. За первое полугодие 2015 года 93.1% доходов государственного бюджета обеспечены за счет налоговых доходов и государственных пошлин, что составило около 501.5 миллиардов драм и на 95.5% обеспечило скорректированную программу в пределах полномочий правительства.

**Ключевые слова:** *Евразийский экономический союз, финансовый контроль, налог на добавленную стоимость, импорт и экспорт, курс драма.*

JEL: H20, H21, H22, H23, H26, F53, F55

**ANUSH MARGARYAN***Researcher at the Chair of Financial Accounting at ASUE*

*Comparative Evaluation of Tax and Duties Laws Between EAEU Member-Countries.* – Assuming as a basis the declaration on Eurasian Economic Integration of November 18, 2011 the Republics of Belarus, Kazakhstan and Russian Federation concluded EAEU agreement by which the Parties have established Eurasian Economic Union (hence forth the Union) the framework of which assumes freedom of goods, services, capital and workforce movement. Only in the first half of 2015 93.1% of the state budget revenues have been provided due to tax revenues and state duties making up 501.5 billion drams and providing the adjusted program within the powers of the Government by 95.5%.

**Key words:** *Eurasian Economic Union, financial control, value-added tax, import and export, dram rate.*

JEL: H20, H21, H22, H23, H26, F53, F55